ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1020-Ա

<<06>> դեկտեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ /ՆԱԽԿԻՆՈՒՄ ՁԵՐԺԻՆՍԿՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9/3 ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆ/ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՀՐԱՄ ԱՇՈՏԻ ՀԵԲՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-003-0034-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.010658 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՓՈՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 842-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 24-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 600-Ն որոշմամբ հաստատված <<Հասարակական նպատակային նշանակության շենքերի, շինությունների դասակարգման>> 6-րդ կետը, հաշվի առնելով, որ քաղաքացի Վահրամ Աշոտի Հեբոյանին սեփականության իրավունքով պատկանող 08-003-0034-0017 կադաստրային ծածկագրով 0.0109 հեկտար մակերեսով հողամասի /համաձայն հողամասի ուղղման հատակագծի՝ 0.010658 հեկտար/ N 03112023-08-0040 վկայականում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնքի, Մարալիկ քաղաք Արկադի Տեր-Թադեվոսյան /նախկինում Ձերժինսկու փողոց թիվ 9/3 կաթսայատուն/ նշված կաթսայատունը քանդված է և շինություն գոյություն չունի /հիմք՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հատատված հողամասի ուղղման հատակագիծ, 02.12.2024 թ. եզրակացություն/, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 31/10/2024թ. N Կ-31102024-08-0088 որոշումը, ործի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի 2024 թվականի նոյեմբերի 22-ի N ԳՄ/19185-2024 թ. գրությունը, ընդառաջելով քաղաքացի Վահրամ Աշոտի Հեբոյանի 2024 թվականի սեպտեմբերի 19-ի դիմումին.

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Վահրամ Աշոտի Հեբոյանին սեփականության իրավունքով պատկանող 08-003-0034-0017 կադաստրային ծածկագրով 0.0109 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի /համաձայն հողամասի ուղղման հատակագծի՝ 0.010658 հեկտար, վկայական N 03112023-08-0040, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնքի, Մարալիկ քաղաք Արկադի Տեր-Թադեվոսյան /նախկինում Ձերժինսկու/ փողոց թիվ 9/3 կաթսայատուն/, գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն՝ այդ հողամասում հասարակական նշանակության առևտրի սրահ կառուցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12-ի N 20-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի>> համաձայն, համայնքի վարչական տարածքում /բնակավայրերում/ գտնվող, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության և /կամ/ օգտագործման իրավունքով պատկանող հողամասերի գործառնական նշանակության փոփոխության ծառայության դիմաց վճարի չափը սահմանված է՝ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101090 հաշվեհամարին /ՀՎՀՀ՝ 05546057/:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 2-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադեվոսյան փողոց /նախքինում Ձերժինսկու/ թիվ 9/3 հասցեում գտնվող, քաղաքացի Վահրամ Աշոտի Հեբոյանին սեփականության իրավունքով պատկանող կաթսայատան քանդված շինության և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի գործառնական նշանակությունները հասարակական կառուցապատման փոփոխադրելու և հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 19-ի N 800-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 842-Ա որոշումը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<06>> դեկտեմբերի 2024 թվականի
քաղաք Մարալիկ